

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2008 թվականի հունվարի 25-ի

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

նպատակ ունենալով ապահովելու տվյալների լիարժեք եւ հավաստի հաշվառումը երրորդ երկրների հետ առետուր, ինչպես նաեւ փոխադարձ առետուր իրականացնելիս, վերլուծելու արտաքին առետուրային հոսքերի հիմնական միտումները, կառուցվածքը եւ դինամիկան, համապատասխան տեղեկություններ տրամադրելու մաքսային միության մարմիններին՝ առետուրային քաղաքականության ոլորտում որոշումներ կայացնելու համար,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրով կարգավորվում են Մաքսային միության ապրանքների արտաքին առետուրի մաքսային վիճակագրությունը (այսուհետ՝ արտաքին առետուրի վիճակագրություն) եւ Մաքսային միության ապրանքների փոխադարձ առետուրի մաքսային վիճակագրությունը (այսուհետ՝ փոխադարձ առետուրի վիճակագրություն) վարելու ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակներով՝ «Մաքսային միության ապրանքներ» արտահայտությունը նշանակում է.

մաքսային նպատակներով Մաքսային միության մաքսային տարածքում ազատ շրջանառության համար բաց թողնված ապրանքների կարգավիճակ ունեցող, այն է՝ Մաքսային միության մաքսային տարածքից դուրս չհանված ապրանքներ,

ապրանքներ, որոնք ամբողջովին արտադրվել են Մաքսային միության անդամ պետություններում,

ապրանքներ, որոնք բաց են թողնվել ազատ շրջանառության համար Մաքսային միության մաքսային տարածքում,

ապրանքներ, որոնք արտադրվել են Մաքսային միության անդամ պետություններում՝ ամբողջովին Մաքսային միության մաքսային տարածքում արտադրված կամ ազատ շրջանառության համար բաց թողնված ապրանքներից:

Սույն Համաձայնագրում հասկացությունները գործածվում են Մաքսային միության շրջանակներում կնքված այլ միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 3

Կողմերի լիազոր մարմիններն ինքնուրույն իրականացնում են արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության վարումը՝ «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 7-ի պայմանագրով ստեղծված՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից մշակվող մեթոդաբանությանը համապատասխան:

Կողմերը Մաքսային միության հանձնաժողովին տեղեկացնում են Կողմերի լիազոր մարմինների, դրանց պաշտոնական անվանումների եւ Կողմերի լիազոր մարմինների փոփոխությունների մասին:

Արտաքին առևտրի վիճակագրությունը ձեւավորելիս որպես ելակետային տվյալներ են ընդունվում ապրանքների մաքսային ձեւակերպումների ժամանակ մաքսային մարմիններին ներկայացվող փաստաթղթերում զետեղված տեղեկությունները:

Փոխադարձ առևտրի վիճակագրությունը ձեւավորելիս որպես ելակետային տվյալներ են ընդունվում արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից, փոխադարձ առևտուր իրականացնելու դեպքում, Կողմերի լիազոր մարմիններին ներկայացվող փաստաթղթերում զետեղված տեղեկությունները:

Մաքսային միության արտաքին առևտրի վիճակագրությունը եւ փոխադարձ առևտրի վիճակագրությունը ձեւավորվում են Կողմերի՝ Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների կողմից ներկայացված՝ արտաքին եւ փոխադարձ առևտրի մասին տվյալների

հիման վրա, (այսուհետ՝ արտաքին առևտրի վիճակագրության ու փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալներ):

Հոդված 4

Կողմերի լիազոր մարմինները Մաքսային միության հանձնաժողովին տրամադրում են արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալները, որոնց փոխանցման կարգը սահմանվում է առանձին արձանագրությամբ:

Կողմերը լիազոր մարմիններից ընտրում եւ նշանակում են արտաքին առևտրի վիճակագրության ու փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների տրամադրման համար պատասխանատու մարմիններ (այսուհետ՝ տվյալների տրամադրման համար պատասխանատու մարմիններ):

Սույն Համաձայնագրի շրջանակներում չեն տրամադրվում Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ գաղտնի կամ սահմանափակ տարածման տվյալները:

Հոդված 5

Արտաքին առևտրի վիճակագրությունը եւ փոխադարձ առևտրի վիճակագրությունը վարելու նպատակով՝ Մաքսային միության հանձնաժողովի կազմում ձեւավորվում է Մաքսային վիճակագրության կենտրոն, որի կարգավիճակը սահմանվում է առանձին արձանագրությամբ:

Մաքսային վիճակագրության կենտրոնն ապահովում է՝

արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների ստացումը տվյալների տրամադրման համար պատասխանատու մարմիններից,

արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների ձեւավորումը,

արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների տրամադրումը Մաքսային միության միության մարմիններին,

արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության

տվյալների հրապարակումն ու փոխանցումը Կողմերին:

Մաքսային վիճակագրության կենտրոնն օգտագործում է ստացված տեղեկություններն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Հոդված 6

Արտաքին առևտրի միասնական վիճակագրություն եւ փոխադարձ առևտրի միասնական վիճակագրություն վարելու նպատակով՝ Մաքսային միության հանձնաժողովը՝

մշակում է արտաքին առևտրի վիճակագրությունը եւ փոխադարձ առևտրի վիճակագրությունը միասնական կերպով վարելու եղանակ, որով ապահովվում է տվյալների համադրելիությունը,

վարում է արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության միասնական դասակարգիչները:

Հոդված 7

Արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության՝ հրապարակման ենթակա տվյալներում ներառված են՝

ընդհանուր առմամբ արտահանման եւ ներկրման մասին, այդ թվում՝ ըստ պետությունների,

ներկրման եւ արտահանման մասին տեղեկություններ ապրանքային եւ դրամական առումով՝ արտաքին տնտեսական գործունեության Ապրանքների միասնական անվանակարգին համապատասխան՝ «ապրանք – երկիր» եւ «երկիր – ապրանք» կտրվածքով:

Արտաքին առևտրի վիճակագրության եւ փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալները հրապարակվում են եռամսյակային եւ տարեկան կտրվածքով:

Հոդված 8

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել

փոփոխություններ, որոնք ձեակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի միջև խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, փոխանցվում են Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի հունվարի 25-ին, մեկ բնօրինակով՝
ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի
ինտեգրման հարցերով կոմիտեում, որը, լինելով սույն Համաձայնագրի ավանդապահը,
յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված օրինակը:

(ստորագրություններ)